որոնք մեր հոգևոր կառավարութեան պարտքերն են կատարում. թէև հաւատացեալներ չունին, բայց տարին մի քանի անգամ այցելում են, ձրի, կամ աժանագին տարածել են նորանց մէջ հայերէն աշխարհարար լեզուով ընթերցանելի գրքեր։

Բայց պէտք է նաև նկատել, որ այդ գրքերը բոլորովին միակողմանի են։ Որքան որ ինձ տեսերում պատահեց տեսնել դրանց տեսակները և ծանօթանալ բովանդակութեանց հետ, այս աշխարհի կենցաղավարութեան համար ոչինչ չը կար. այդ ամենը վերաբերվում էին մարդու հանդերձեալ կեանքին, ինչպէս «Երկնքի ճանապարհ», «Կենաց ջուր» և այլն։

Անխղճմտանք ձև է ժողովրդի հետ այդպէս վարուելը. ոտի տակ տալով նորա տեսանելի քաղաքատնտեսական ներկան և լարել նորա ուշադրութիւնը ապագայ, վերացական հանդերձեալի վերայ միայն։ Այդպիսի հոգևորականներ մենք էլ ենք ունեցել, այժմ էլ դեռ ունինք Տաճկա-Հայաստանումը, որոնք խրատում են համբերութեամբ զոհել բռնաբարողին ընտանիք, ստացուածք, համոզմունք, անձնասիրութիւն. տանել առաքինութեամբ բոլոր կսկիծները, զրկանքները, անպատուութիւնները, խայտառակութիւնները երկնքի արքայութեան համար։